

«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ «ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

ՀՀ, 3104 Գյումրի, Վարպետաց 176, 301 հեռ. +(374 312) 6-69-92, +(374 91) 45-13-37
Էլ փոստ՝ info@shirakcentre.org
Կայք՝ www.shirakcentre.org

ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարար Արթուր Գրիգորյանին

Դիմում-ուղերձ

*Շիրակի մարզի Ղարիբջանյան գյուղի սոցիալապես ծանր պայմաններում հայտնված
ընտանիքին աջակցելու և նրանց երեք երեխաներին Գյումրու տարբեր մանկատներից նույն
մանկատուն տեղափոխելու խնդրի մասին*

Հարգելի պարոն նախարար.

Շիրակի մարզի Ղարիբջանյան գյուղի բնակիչ Սեյրան Հարությունյանի 3 երեխաները Ձեր միջնորդությունով և ըստ ծնողների պնդման՝ իրենց կամքին հակառակ, տեղափոխվել են Գյումրու տարբեր մանկատներ: Երեխաների հայրը, ամիսներ շարունակ թակելով հեռուստաընկերությունների և իշխանությունների դռները, պահանջում է իր երեխաներին, հայտարարելով, որ ինքն ունի աշխատանք և կարող է նրանց պահել:

Այս դեպքը, որի մասին ՋԼՄ-ներով ևս եղել են բազմաթիվ լուսաբանումներ, հարուցել է հասարակության վրդովմունքը: Եվ քանի որ Շիրակի մարզպետարանի պաշտոնյաներն ու լրագրողները նույն դեպքի մասին տալիս էին իրարամերժ տեղեկատվություն, մենք որոշեցինք ինքներս ուսումնասիրություն կատարել՝ այցելելով ինչպես տվյալ ընտանիքի բնակավայր, այնպես էլ երեխաներին հյուրընկալած մանկատներ, տեղում ծանոթանալ այդ ցավալի պատմության մանրամասներին: Մեր՝ «Շիրակ կենտրոնի» աշխատակիցների կողմից կատարվեցին նաև լուսանկարահանումներ ու տեսաձայնագրություններ (<http://shirakcentre.org/index.php/hy/component/videoflow/?task=play&id=47>):

Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ներկա իրավիճակում, երբ այդ ընտանիքը գտնվում է ծայրահեղ ծանր վիճակում և երեխաների մայրը հրատապ բուժզննման կարիք ունի, գուցե ժամանակավոր, բայց միակ ճիշտ լուծումը երեխաներին մանկատուն տեղափոխելն էր: Սակայն սխալ մոտեցում է ցուցաբերվել, երբ նույն ընտանիքի երեխաները բաժանվել և տեղավորվել են քաղաքի տարբեր ծայրամասերում գտնվող մանկատներում: Հաստատությունների աշխատակիցների պատմելով՝ այդ երեխաները համարյա թե չեն խոսում և չեն շփվում, ինչը, կարծում ենք, նաև նրանց մեկմեկուց բաժանելու պատճառով է:

Ուստի դիմում ենք Ձեզ և առաջարկում, որ այդ ընտանիքի երեք երեխաներին հնարավորություն տրվի բնակվելու նույն մանկատանը: Ի դեպ, մեր այս կարծիքը կիսում է նաև «Թոշունյան տուն» մանկատան տնօրեն Ս. Միմոնյանը, ով մեր հանդիպման ժամանակ պատրաստակամություն հայտնեց ցանկացած պահի ընդունելու նաև նույն ընտանիքի մյուս երկու երեխաներին: Երեխաներին միավորելու և նույն մանկատանը տեղափոխելու տեսակետին համաձայն է նաև Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան գիշերօթիկի տնօրեն Անահիտ Կարապետյանը:

Ավելին, ՀՀ կառավարության 9 նոյեմբերի 2006 թվականի N 1735-Ն երեխաների խնամքի և պաշտպանություն իրականացնող կազմակերպություններում (անկախ կազմակերպական-իրավական ձևից) երեխաների տեղավորման մասին որոշմամբ սահմանված կազմի 11-րդ կետի համաձայն. « Մանկատանը տեղավորման ենթակա նույն ընտանիքի երեխաները (քույրեր և եղբայրներ) տեղավորվում են միևնույն մանկատանը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ բժշկական ժամանակավոր հատկացուցումներով այդ երեխաների խնամքն ու դաստիարակությունն անհնար է իրականացնել միասին»:

Հարգելի պարոն նախարար.

խնդրում ենք Ձեզ՝ շուտափույթ կերպով լուծում տալ այս խնդրին և մինչև այդ ընտանիքի սոցիալական վիճակի մի փոքր բարելավումը կամ գոնե կիսախարխուլ տան նորոգումը, որի մասին կարծում ենք հոգ պետք է տանեն նաև մարզային և տեղական իշխանությունները, երեխաներին հրատապ կերպով տեղափոխել նույն մանկատուն: Անշուշտ, լավագույն տարբերակը «Թոշունյան տունն է», քանի որ գործող կարգի համաձայն Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան գիշերօթիկը իրավունք ունի հյուրընկալել միայն դպրոցահասակ երեխաներին: Իսկ սոցիալապես ծայրահեղ ծանր պայմաններում ապրող այս ընտանիքի մորն անհրաժեշտ է ապահովել անվճար բուճզնամամբ, անհրաժեշտության դեպքում՝ նաև բուժմամբ:

«Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ՝

Վահան Թումասյան

Գյումրի
09.03.2011 թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

«21» *Տեպրեմբեր* 2011 թ.

N *ՏԲ/ՎԶ-Գ-Ե/2093-ՆԼ*

Ձեր 11.03.2011թ. թիվ 5252

Քաղաքական մշակույթի և համաձայնությունների
զարգացման <Շիրակ կենտրոն> ՀԿ-ի
նախագահ պարոն Վ.Թումասյանին

Հարգելի պարոն Թումասյան

Համաձայն Ձեր դիմումի հայտնում եմ, որ Շիրակի մարզի Ղարիբջանյան գյուղի
բնակիչ Սեյրան Հարությունյանի երկու երեխաները 16.03.2011 թվականին
վերաուղեգրվել են Գյումրու <Թռչունյան տուն> երեխաների խնամքի և
պաշտպանության գիշերօթիկ հաստատություն, որտեղ մինչ այդ խնամվում էր
Ս.Հարությունյանի երրորդ երեխան:

Հարգանքով՝  Ֆ. Բերիկյան

Կատարող՝ Ընտանիքի, կանանց և երեխաների
հիմնահարցերի վարչություն
հեռախոս 56 53 21